

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 197

Ինչի՞ց է կախեալ մի հաւատացեալի յարատեւութիւնը: Ուէստմինստըր Հաւատոյ Հանգանակը մատակարարում է այս հարցման մի գերազանց ու ճշգրիտ պատասխան (Գուրի 17, Բաժին 2):

Ընտրութեան հրովարտակի անփոփոխականութիւն – Նախ, հաւատացեալի յարատեւութիւնը հիմնւած է ընտրութեան հրովարտակի անփոփոխականութեան վրայ: Այն ինչ որ Աստուած հրովարտակել է Նա եղելութեան է բերում ըստ ծրագրւած առանց որեւէ անորոշութեան: Աստուծոյ ծրագրերը չեն փոխուում որովհետեւ Նա Ինքն չի փոխուում: Աստուծոյ բոլոր հրովարտակւած բաների արդիւնքը վստահ է քանի որ այդ պայմանաւորւած կամ ենթակայ չի Աստուծոց դուրս որեւէ բանից: Եւ այդ անշուշտ ներառնում է ընտրութեան հրովարտակը՝ այսինքն Աստուծոյ փրկութեան համար եղած մարդկանց ընտրութիւնը:

Հռովմայեցիս 8:29-30ը՝ ճանաչւած որպէս փրկութեան ոսկէ շղթան, ներկայացնում է մի անխախտելի շղթայ, որը սկսուում է նախագիտութիւնով եւ աւարտուում է փառաւորումով: Պօղոսը ասում է որ բոլոր նրանց որոնց Աստուած նախագիտեց Նա նաեւ նախասահմանեց, եւ բոլոր նրանց որոնց Նա նախասահմանեց Նա նաեւ կանչեց, եւ բոլոր նրանց որոնց Նա կանչեց Նա նաեւ արդարացրեց, եւ բոլոր նրանց որոնց Նա արդարացրեց Նա նաեւ փառաւորեց (Հռովմայեցիս 11:29, Փիլիպպեցիս 1:6): Ոչ միայն Աստուծոյ ծրագրերը անդառնալի ու անփոփոխական են, Նա նաեւ ունի գերիշխան ու բացարձակ զօրութիւնը իրականացնելու դրանցից ամեն մէկը կատարելապէս, եւ այդ ներառնում է ամեն Իր ընտրեալների ամբողջական ու վերջնական փրկութիւնը (Ա. Պետրոս 1:3-5):

Աստուծոյ ազատ ու անփոփոխելի սէր – Երկրորդ հերթին, հաւատացեալի յարատեւութիւնը հոսում է Հօր Աստուծոյ ազատ ու անփոփոխելի սիրոյց: Եբրայերէն «խեսեդ» բառը՝ որը թարգմանւել է որպէս ողորմութիւն կամ հաստատուն սէր, ներկայացնում է Աստուծոյ Իր ժողովրդի հանդէպ եղած յատուկ սէրը, որը յաւերժաբար անդադար, անփոփոխ, եւ անսպառ է, եւ ուստի դրա պատճառով Աստուծաշունչը ասում է որ մենք չենք սպառում (Մաղմոս 21:7, 103:17, Եսայիա 54:10, Երեմիայի Ողբերը 3:22-23, Մաղաքիա 3:6):

Նախագիտութեան բառը Հռովմայեցիս 8:29ում չի ակնարկում Աստուծոյ նախատեսութեան՝ թէ մարդիկ ինչ կ'անեն ապագայում եւ ապա Նրա նրանց ընտրումը. փոխարէն, այդ ակնարկում է Աստուծոյ անցեալի յախտենականութեան մէջ եղած որոշման՝ որ մտնել որոշ մարդկանց հետ մի անձնական, մտերիմ, սիրոյ, եւ փրկարար յարաբերութեան մէջ: Աստուծոյ մարդկանց ընտրութիւնը կախեալ չի Աստուծոյ մարդու մէջ եղած որեւէ արժանիքի նախատեսութեան. այլ, այդ պարզապէս կախեալ է Իր որոշման որ նախասիրել նրանց մի յատուկ եւ փրկարար կերպով: Եւ Պօղոսը ասում է որ բոլոր նրանց որ Աստուած այսպէս սիրեց (նախասիրեց) Նա նաեւ նախասահմանեց, կանչեց, արդարացրեց, եւ ի վերջոյ փառաւորեց (Հռովմայեցիս 8:30, Եփեսացիս 1:3-5): Ուստի յստակօրէն պարզ է որ ոչ միայն մեր փրկութիւնը այլ նաեւ մեր յարատեւութիւնը հիմնւած է այնպիսի մի զարմանալի սիրոյ վրայ, մի սէր որը ազատ ու անփոփոխելի է՝ մի սէր որը երբէք մեզի չի թողնի (Ա. Յովհաննէս 3:1):

Յիսուս Քրիստոսի արժանիքի ու բարեխօսութեան ազդեցութիւն – Երրորդ հերթին, Հանգանակը նշում է որ հաւատացեալի յարատեւութիւնը հենւած է Յիսուս Քրիստոսի արժանիքի ու բարեխօսութեան ազդեցութեան վրայ: Հակառակ լայնատարած կարծիքին, ոչինչ մարդու մէջ կամ նրանով կատարւած նրա փրկութեան արժանաւոր հիմունքն է (Հռովմայեցիս 4:4, 11:6). փոխարէն, մեր փրկութիւնը միմիայն հենւած է Քրիստոսի ու Նրա կատարած գործի արժանիքի վրայ՝ բոլորովին եւ ազդեցիկօրէն յագեցնելով Աստուծոյ արդարութիւնը մեր փոխարէն (Հռովմայեցիս 3:21-26, Տիմոս 3:4-7): Քրիստոսի փրկանաւորութեան ազդեցութիւնը կատարեալ ու յախտենական է՝ մէկ անգամ ընդմիշտ, եւ մշտնջենապէս (Ա. Կորնթացիս 1:30-31, Եբրայեցիս 9:11-12, 10:14):

Քրիստոսի արժանիքից առաւել Հանգանակը նաեւ նշում է որ մեր յարատեւութիւնը հենւած է Քրիստոսի բարեխօսութեան ազդեցութեան վրայ: Իր երկրային ծառայութեան ընթացքում Յիսուսը բարեխօսեց Իր աշակերտների համար, ինչպէս նաեւ բոլոր նրանց համար որոնք Իր Խօսքի միջոցով պիտի հաւատային Նրան յետագայ դարերում (Յովհաննէս 17:9, 11, 15, 20, 24): Քրիստոսի քահանայական պաշտօնն ու ծառայութիւնը չաւարտեց երկրի վրայ այլ այդ շարունակուում է այժմ երկնքում (Եբրայեցիս 8:1-2): Որպէս մեր Քահանայապետը երկնքում, Յիսուսը ներկայացնում է մեզ Հօրը առջեւ. Նա շարունակաբար աղօթում է մեր հոգեւոր աճման ու յարատեւութեան համար (Յովհաննէս 17:20, Հռովմայեցիս 8:33-34, Եբրայեցիս 2:18, 4:15-16, 7:25). Նա պաշտպանում է մեզ մեր բոլոր թշնամիներից (Ա. Յովհաննէս 5:18). եւ Նա Աստուծոյ առջեւ ընդունելի է դարձնում մեր պաշտամունքը, աղօթքները, ծառայութիւնը, եւ ամեն ինչ որ անում ենք՝ որն թերի ու մեղքով խառնւած են (Ա. Պետրոս 2:4-5):

Ինչպէս Իր կենքով ու մահով, Յիսուսի քահանայական բարեխօսութիւնը նաեւ կատարեալ ու ազդեցիկ է, որը Հայրը լսում եւ պատասխանում է (Յովհաննէս 11:42), եւ որը փրկում է մեզ մինչեւ ծայրագոյն կէտը: